

ք. Երևան

«28» մարտի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Դիլանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ձենել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### 2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառով և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### 2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:  
2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար

վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

#### **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին

համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է **125,917,100 (հարյուր քսանհինգ միլիոն ինը հարյուր փասնյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ, պայմանագրի 1-ին և 2-րդ անվանադրոշերով ԱԱՀ վճարող է:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարման ապահովելու նպատակով վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>1</sup>:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂՔԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

<sup>1</sup> Պայմանագիրը «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:


**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բագրևանդի 5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Ը 900011144129  
ՀՎՀՀ 00867415  
ՀՀ պաշտպանության նախարարության  
ՆՏԱ դեպարտամենտի պետի ԴԺԿ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ  
Ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131  
«Կոնվերս բանկ» ՓԲԸ  
Հ/Ը 1930048363450100  
ՀՎՀՀ 02621803  
տնօրեն



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՅՈՒԳԻՐ

№	Ապրանքի CPV անվանում	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ	Արտաբերիչ կեսը	Արտադրողի անվանումը	Սափարկու երկրը
1.	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	Կասետներ նախատեսված sterrat 100 s ստերիլիզատորի համար	<p>Ստերիլիզացնող նյութ պարունակող քարտիչներ՝ 58%-59,5% ջրածնի պերօքսիդի պարունակությամբ, որը նախատեսված է պլաստիկ ստերիլիզացիայի համար՝ Ստետադ100S՝ համակարգում: Կասետը (քարտիչ) իրենից ներկայացնում են հերմետիկ ձուլված պլաստման կաղապար, որը կազմված է ազրոլ նյութ պարունակող ոչ պակաս, քան 10 միանման բջիջներից, փաթեթավորված է սովորաբար արկի մեջ և պարունակում է ազրոլ նյութի հոսքը վերահսկող զգայորոշիչներ: Մեկ տուփում 5 կասետ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով</p>	ASP	Johnson & Johnson	ԱՄՆ, Շվեյցարիա
2.	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	Կասետներ նախատեսված STERRAD* NX ստերիլիզատորի համար	<p>Ստերիլիզացնող նյութ պարունակող քարտիչներ՝ 58%-59,5% ջրածնի պերօքսիդի պարունակությամբ, որը նախատեսված է պլաստիկ ստերիլիզացիայի համար՝ Ստետադ NX՝ համակարգում: Կասետը (քարտիչ) իրենից ներկայացնում են հերմետիկ ձուլված պլաստման կաղապար, որը կազմված է ազրոլ նյութ պարունակող ոչ պակաս, քան 10 միանման բջիջներից, փաթեթավորված է սովորաբար արկի մեջ և պարունակում է ազրոլ նյութի հոսքը վերահսկող զգայորոշիչներ: Մեկ տուփում 5 կասետ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով</p>	ASP	Johnson & Johnson	ԱՄՆ, Շվեյցարիա
3.	Վերականգնողական գործիքներ	Հարմարակալ ուկրոնային էլեկտրոդային ծայրագրի	<p>Սկրապ կազմակերպող էլեկտրոդային արտադրանք, բունակով, բաց և էներգետիկ միջամտությունների համար, ձեռքի ակտիվացման հանարարությամբ: Ակտիվացիայի բացակայանքն ընկալող են օգտագործվել որպես գրասպեր կամ սերմնակ: Սկրապի տիտանային սայրի երկայնական տատանման հաճախությունը կազմում է 55,5 կՀց: Ակտիվացիան հանարարվող է մաքսիմալ և մինիմալ հզորության ռեժիմների կոմպլեքսով, որոնք տեղակայված են ծայրագրի բնական առաջային և կողային մասերում՝ արագ հասանելիություն ապահովելու համար, ինչպես նաև ուղիքի սերմնակի միջոցով: Ծայրագրի բնական մարմինը ունի ներկայացված համակարգ, որը հնարավորություն է տալիս տակտիկ և ճայնային համակարգի միջոցով հաստատել բրանշերի ամբողջական փակման մասին: Առկա է գեներատորի հետ հետադարձ կապի և ակտիվ սայրի ջերմաստիճանի վերահսկման մեխանիզմ, որը իրականացվում է G11 գեներատորի միջոցով: Այս համակարգը հնարավորություն է տալիս բարձրացնել ծայրագրի աշխատանքի էֆեկտիվությունը և արագությունը, ինչպես նաև նվազեցնել հյուսվածքների կորմնային ջերմային վնասման աստիճանը: Ցորունը պտտվում է 360 աստիճանով՝ ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցորունի և բնական տրամագիծը 5 մմ: Ցորունը պտտվում է 360 աստիճանով՝ ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցորունի և բնական միացման մասում, ապահովելով արագ հասանելիություն մեկ ձեռքի միջոցով, հեշտացնում է տեսանելիությունը և վիրահատվող հյուսվածքի հասանելիությունը: Պասիվ բրանշի երկու մակերեսների վրա առկա է 5 մմ երկարության մակերես: Առկա է ակտիվոր մուտք՝ լսարարակային բնական միացման համար: Բրանշերի արբերման արտադրանքային կոմպլեքսը բնական է: Առկա են ռեդիոն միջադրանքի բրանշերի արբերման բնական ներքին մակերեսի վրա, ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոմպլեքսը և ռոտացիոն օղակների վրա, որոնք կանխում են ստիպիլ և նպաստում վիրաբույժի ձեռքի հարմար տեղակայմանը: Աշխատանքային մուտք բարկացած է ակտիվ /սայր/ և պասիվ բրանշերից: Ակտիվ բրանշը տիտանային է՝ հատուկ ծածկությամբ, որը հնարավորություն է տալիս նվազեցնել հյուսվածքների կաշտությունը, թեթևացնել տեսանելիությունը և սայրի լավացնել տեսանելիությունը աշխատանքային դաշտի և կտրվածքի վրա ունի վեցանկյուն տեսք: Արտադրված և թեթև մակերեսները ինչպես նաև ակտիվ բրանշի պրոքսիմալ մասը նախատեսված են հիմնականում կազմակերպիչի համար: Սուր վերին և ստորին եզրերը ինչպես նաև ակտիվ բրանշի դիստալ մասը /ծայրը/ նախատեսված են հյուսվածքները հատելու համար: Պասիվ բրանշը ունի ակտիվներով պլաստիկ վրադիր՝ հյուսվածքների հետ էֆեկտիվ աշխատելու համար: Մատակարարվում է աշխատանքային մասի կողմից: Մատակարարվում է ստերիլ՝ գործարանային տուփերով, կարող է կիրառվել կարդիոտորնոսկոպիայի ռեզոնանսի հիստոլոգիայի և Վճարմանը: Համապատասխան է GEN11 գեներատորների հետ՝ հատուկ հարմարակալի միջոցով: Փաթեթավորումը՝ գործարանային, տուփում ոչ պակաս 6 հատ</p>	Eticon-Endo (MIS)	Johnson & Johnson	ԱՄՆ, Մեքսիկա

4.	Վիրաբուժական գործիքներ	Հարմունիկ ուլտրաձայնային ծայրագիծ	<p><b>Սկրատ կրագույացիոն երգիծանքի արժանատիությունների համար, ձեռքի ակտիվացման համարադրույթային բացակայության դեպքում կարող են օգտագործվել որպես գրասպիտ կամ սերմնակ:</b> Սկրատի տիրույթային սայրի երկայնական տատանման հաճախությունը կազմում է 55.5 կՀց: Ակտիվացման համարադրույթային և միջինային հզորության ռեժիմների կոճակների միջոցով, որոնք տեղակայված են ծայրագիծի բնական արտադրության և միջինային հզորության մասերում արագ հասանելիություն ապահովելու համար, ինչպես նաև ուղիք սերմնակի միջոցով: Ծայրագիծի բնական մարմինը ունի ներկատուցված համակարգ, որը հնարավորություն է տալիս տալիս և ձայնային համակարգի միջոցով հաստատել բրանչերի անբողջական փակման մասին: Առկա է գեներատորի հետ հետադարձ կապի և ակտիվ սայրի ջերմաստիճանի վերահսկման մեխանիզմ, որը իրականացվում է G11 գեներատորի միջոցով: Այս համակարգը հնարավորություն է տալիս բարձրացնել ծայրագիծի աշխատանքի էֆեկտիվությունը և արագությունը, ինչպես նաև նվազեցնել հյուսվածքների կոլմնային ջերմային վնասման աստիճանը: Ցողունը հավաքակալային ծածկույթով 23 սմ ակտիվ բրանչի բրանչի ծայրից մինչև պտտման օղի հատված: Ցողունի տրամագիծը 5 մմ: Ցողունը պտտվում է 360 աստիճանով ռոտացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բնական միացման մասում, ապահովելով արագ հասանելիություն մեկ ձեռքի միջոցով, հեշտացման և տեսանելիությունը և վիրահատվող հյուսվածքի հասանելիությունը: Պատիվ բրանչի երկու մակերեսների վրա առկա է 5 մմ երկարության մակերես: Առկա է ակտիվացման մուտք՝ լայնարակային բրանչի միացման համար: Բրանչերի արտերման արտեմնակայան բռնակ: Առկա են ռեժիմներ միջադիրներ բրանչերի արտերման բռնակի ներքին մակերեսի վրա, ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոճակների և ռոտացիոն օղակների վրա որոնք կանխում են ասիումը և նպաստում վիրաբույժի ձեռքի հարմար տեղակայմանը: Աշխատանքային մասը բաղկացած է ակտիվ/սայր/ և պասիվ բրանչերից: Ակտիվ բրանչը տիրույթային է՝ հատուկ ծածկույթով, որը հնարավորություն է տալիս նվազեցնել հյուսվածքների կաշտությունը, թեքված է, որը հնարավորություն է տալիս լավացնել տեսանելիությունը աշխատանքային դաշտի և կտրվածքի վրա ունի վեցանկյուն տեսք: Արտադրված և թեք մակերեսները ինչպես նաև ակտիվ բրանչի պրոքսիմալ մասը նախատեսված են հիմնականում կրագույացիայի համար: Սուր վերին և ստորին եզրերը ինչպես նաև ակտիվ բրանչի դիստալ մասը /ծայրը/ նախատեսված են հյուսվածքները հատելու համար: Պատիվ բրանչը ունի ակտիվներով պատույթի վրա դիր՝ հյուսվածքների հետ էֆեկտիվ աշխատելու համար: Մատակարարվում է աշխատանքային մասի կողմից: Մատակարարվում է ստերիլ՝ գործարանային տակերով, կարող է վիրառվել կարդիոստիմուլատորներ ունեցող հիվանդների մոտ: Համատեղելի է GEN11 գեներատորների հետ հատուկ հարմունիկ փոխարկիչի միջոցով: Փայթեթավորումը՝ գործարանային, տուփում ոչ պակաս 6 հատ</p>	Johnson & Johnson	Eticon-Endo (MIS)	ԱՄՆ, Մեքսիկա
5.	Վիրաբուժական գործիքներ	Սկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների արագացման համակարգով հարմունիկ նշտարի համար	<p>Կրագույացիոն մկրատ բաց միջանտությունների հյուսվածքների արագացման համակարգով, ձեռքի ակտիվացիայի հնարավորությամբ: Սկրատը պլաստիկ կորպուսով, երկու մկրատային բռնակներով՝ ակտիվ և ֆիքսված, նախատեսված են միաժամանակ հատելու և կրագույացիայի համար, որոնք ունեն մինչև 5 մմ տրամագծով անոթներ: Ակտիվացիայի բացակայության դեպքում կարող են օգտագործվել որպես գրասպիտ կամ սերմնակ: Սկրատի տիրույթային սայրի տատանման հաճախությունը երկայնական ուղղությամբ 55.5 կՀց: Ծայրագիծը հնարավոր է ակտիվացնել միջինային կամ միջինային հզորության ռեժիմների կոճակների միջոցով, որոնք տեղակայված են ծայրագիծի բնական արտադրության և միջինային հզորության մասերում արագ հասանելիություն ապահովելու համար, ինչպես նաև ուղիք սերմնակի միջոցով: Ծայրագիծի բնական մարմինը ունի ներկատուցված համակարգ, որը լրացուցիչ հնարավորություն է տալիս ակտիվացնել հյուսվածքները հատելու համար: Պատիվ բրանչը ունի ընդամուտ երկարությունը 9 սմ՝ հաշված սայրից մինչև ձեռքի կառավարման MAX կոճակը: Աշխատանքային մասը բաղկացած է ակտիվ/սայր/ և պասիվ բրանչերից: Ակտիվ բրանչը տիրույթային է, կոճակ, թեք, որը հնարավորություն է տալիս լավացնել աշխատանքային դաշտի տեսանելիությունը: Ակտիվ բրանչի/սայր/ երկարությունը 16 սմ: Պատիվ բրանչը ունի պլաստիկ վիրադիր ակտիվներով, որը ապահովում է հյուսվածքների հետ արդյունավետ աշխատանքը: Գործիքի ցողունը պտտվում է և նվազեցնում է ծայրագիծի տաքացումը: Բրանչերի արտերման բռնակների ներքին մակերեսի և ակտիվացիայի կոճակների վրա առկա ռեժիմային ծածկույթը կանխում են վիրաբույժի ձեռքի ասիումը և նպաստում են ձեռքի հարմար տեղակայմանը: Բռնակների օղակների արտադրության սերմնան ղեկավարում առկա տարածությունը ապահովում է կառավարելի կոմպոնտի չափերով դիսկոնցիայի վրա: Առկա է ակտիվացման մուտք՝ թեթևացված լայնարակային բրանչի միջնային համար: Մատակարարվում է ստերիլ գործարանային տակերով, կոմպլեքտավորվում է աշխատանքային մասի կողմից և աջակցող ռեժիմային վիրադիրով ծայրագիծը միջանտությունների հետ՝ հատուկ հարմունիկ փոխարկիչի միջոցով: Համատեղելի է GEN11 գեներատորների հետ՝ հատուկ հարմունիկ փոխարկիչի միջոցով:</p>	Johnson & Johnson	Eticon-Endo (MIS)	ԱՄՆ, Մեքսիկա
5.	Վիրաբուժական գործիքներ	Սկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների արագացման համակարգով հարմունիկ նշտարի համար	<p>Կրագույացիոն մկրատ բաց միջանտությունների հյուսվածքների արագացման համակարգով, ձեռքի ակտիվացիայի հնարավորությամբ: Սկրատը պլաստիկ կորպուսով, երկու մկրատային բռնակներով՝ ակտիվ և ֆիքսված, նախատեսված են միաժամանակ հատելու և կրագույացիայի համար, որոնք ունեն մինչև 5 մմ տրամագծով անոթներ: Ակտիվացիայի բացակայության դեպքում կարող են օգտագործվել որպես գրասպիտ կամ սերմնակ: Սկրատի տիրույթային սայրի տատանման հաճախությունը երկայնական ուղղությամբ 55.5 կՀց: Ծայրագիծը հնարավոր է ակտիվացնել միջինային կամ միջինային հզորության ռեժիմների կոճակների միջոցով, որոնք տեղակայված են ծայրագիծի բնական արտադրության և միջինային հզորության մասերում արագ հասանելիություն ապահովելու համար, ինչպես նաև ուղիք սերմնակի միջոցով: Ծայրագիծի բնական մարմինը ունի ներկատուցված համակարգ, որը լրացուցիչ հնարավորություն է տալիս ակտիվացնել հյուսվածքները հատելու համար: Պատիվ բրանչը ունի ընդամուտ երկարությունը 9 սմ՝ հաշված սայրից մինչև ձեռքի կառավարման MAX կոճակը: Աշխատանքային մասը բաղկացած է ակտիվ/սայր/ և պասիվ բրանչերից: Ակտիվ բրանչը տիրույթային է, կոճակ, թեք, որը հնարավորություն է տալիս լավացնել աշխատանքային դաշտի տեսանելիությունը: Ակտիվ բրանչի/սայր/ երկարությունը 16 սմ: Պատիվ բրանչը ունի պլաստիկ վիրադիր ակտիվներով, որը ապահովում է հյուսվածքների հետ արդյունավետ աշխատանքը: Գործիքի ցողունը պտտվում է և նվազեցնում է ծայրագիծի տաքացումը: Բրանչերի արտերման բռնակների ներքին մակերեսի և ակտիվացիայի կոճակների վրա առկա ռեժիմային ծածկույթը կանխում են վիրաբույժի ձեռքի ասիումը և նպաստում են ձեռքի հարմար տեղակայմանը: Բռնակների օղակների արտադրության սերմնան ղեկավարում առկա տարածությունը ապահովում է կառավարելի կոմպոնտի չափերով դիսկոնցիայի վրա: Առկա է ակտիվացման մուտք՝ թեթևացված լայնարակային բրանչի միջնային համար: Մատակարարվում է ստերիլ գործարանային տակերով, կոմպլեքտավորվում է աշխատանքային մասի կողմից և աջակցող ռեժիմային վիրադիրով ծայրագիծը միջանտությունների հետ՝ հատուկ հարմունիկ փոխարկիչի միջոցով:</p>	Johnson & Johnson	Eticon-Endo (MIS)	ԱՄՆ, Մեքսիկա



